

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-941-04.02.2016-ԳԿ-010/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել բուհերի խորհուրդների ապաքաղաքականացումը՝ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքական կուսակցության կառավարման մարմինների անդամներին զրկելով բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի անդամ դառնալու հնարավորությունից:

Հատկանշական է, որ, համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդն ուսումնական

հաստատության կոլեգիալ կառավարման մարմին է, որի կազմը ձևավորվում է ոչ միայն հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից, այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից: Այդ առումով պարզ չէ, թե քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն ինչպես կարող են *էապես ազդել* խորհրդի կողմից քվեարկության արդյունքներով ընդունվող որոշումների վրա, և ինչ չափանիշներով է որոշվում «էապես ազդեցությունը»:

Ըստ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ համապատասխան սահմանափակումն անհրաժեշտ է տարածել նաև հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց վրա՝ հաշվի առնելով այն, որ նշված անձինք հիմնականում ներկայացնում են երկրում գործող քաղաքական կուսակցությունները: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի իմաստով հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց շրջանակը բավականին լայն է, և պարտադիր չէ, որ, զբաղեցնելով հայեցողական պաշտոն, անձը հանդիսանա նաև որևէ կուսակցության անդամ: Այդ առումով օրենքի նախագծով սահմանափակվում է որևէ կուսակցության անդամ չհանդիսացող և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց իրավունքները:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի սկզբունքներին համապատասխան, մշակում է «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որի համաձայն վերանայվում են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման (հոգաբարձուների) խորհուրդների ձևավորման սկզբունքները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ բացակայում են օրենքի նախագծի ընդունման իրավական հիմքերը և դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման
դեպքում**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական
կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմում որպես հիմնադրի, լիազոր մարմնի ներկայացուցիչ չեն կարող նշանակվել քաղաքական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձիք, քաղաքական կուսակցության կառավարման մարմինների անդամները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի *նպատակը բարձրագույն ուսումնական հաստատությունները քաղաքական կուսակցությունների հնարավոր ազդեցությունից հեռու պահելն է* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է, որ խորհրդի կազմում որպես հիմնադրի, լիազոր մարմնի ներկայացուցիչ չեն կարող նշանակվել քաղաքական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքական կուսակցության կառավարման մարմինների անդամները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-941-04.02.2016-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«խորհրդի կազմում որպես հիմնադրի, լիազոր մարմնի ներկայացուցիչ չեն կարող նշանակվել քաղաքական եւ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձիք, քաղաքական կուսակցության կառավարման մարմինների անդամները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծի ընդունման հիմնական նպատակն է բարձրագույն ուսումնական հաստատությունները առավելագույնս հեռու պահել քաղաքական կուսակցությունների հնարավոր ազդեցություններից:

Ներկայումս, գրեթե բոլոր ԲՈՒՀ-երի խորհուրդների նախագահներն իշխող կուսակցության ներկայացուցիչներն են, որն էապես ազդում է տվյալ ԲՈՒՀ-ի գործունեության, ինչպես նաեւ տվյալ ԲՈՒՀ-ի վերաբերյալ հասարակական ընկալումների վրա:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական եւ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձիք հիմնականում ներկայացնում են երկրում գործող քաղաքական կուսակցությունները, ապա՝ գրկելով վերոնշյալ անձանց բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի անդամ դառնալու հնարավորությունից, կվերափոխվի ԲՈՒՀ-երի ներկայիս գերքաղաքականացվածությունը:

Կրթական համակարգերը պետք է զերծ մնան տարատեսական քաղաքական խաղերից, քաղաքական շահարկումների թիրախ դառնալուց, այդ դեպքում միայն ԲՈՒՀ-երը կպատրաստեն անկախ մտածելակերպով, բարձր իրավագիտակցությամբ օժտված կառավարման համակարգի համար պիտանի մասնագետներ: Ապաքաղաքականացնելով ԲՈՒՀ-ական խորհուրդները՝ դրանով իսկ ԲՈՒՀ-ական խորհուրդների համար հնարավորություն կընձեռնվի վերջիններիս կողմից առավել անկախ որոշումներ կայացնել:

Եթե նույնիսկ ընդունենք, որ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները (ՀՀ նախագահ, վարչապետ, ԱԺ նախագահ, նախարարներ, քաղաքապետ եւ այլն) որեւէ ձեւով չեն ազդում ԲՈՒՀ-երի կառավարման արդյունավետության, կամ որոշումների կայացման անկախության վրա, ապա՝ հաշվի առնելով վերոնշյալ անձանց գերզբաղվածությունը՝ առաջարկվող օրինագծը հնարավորություն է ընձեռում նրանց ազատվել ԲՈՒՀ-երի խորհուրդներում սիմվոլիկ ներկայացվածության պարտականությունից:

Առաջարկվող օրենքի նախագծով հավասար հնարավորություններ կստեղծվի Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների՝ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման վրա ազդեցություն ունենալու առումով եւս:

Հաշվի առնելով, որ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի քարոզարշավի ժամանակ բավականաչափ քաղաքականացվեց այս հարցը, ապա՝ օրենսդրորեն ամրագրելով ԲՈՒՀ-երի խորհուրդների ապաքաղաքականացումը, դրանով իսկ կբացառվի ԲՈՒՀ-երի խորհուրդների հնարավոր դերակատարումը առաջիկա ընտրություններում եւ կնպաստենք վերջիններիս՝ ընտրական գործընթացների վրա այս կամ այն ազդեցություն ունենալը չշահարկելուն: